# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Զ.Մնդրանիկի 8/1, Հեռ. (0253) 2-41-00
Է.փոստ՝ alaverdi.lori@mta.gov.am

N 756

*25 մայիս 2017թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Նալբանդյան.

Ձեզ ենք ուղարկում Ալավերդի համայնքի ղեկավարի 2017 թվականի N 174-Ա - N 176 Ա որոշումները:

Առդիր՝ 5 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Էվոյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՄԱՅԻՍԻ 2017 թվականի N 176-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի քաղաքի Ազատամարտիկների փողոցի հարավային մասում գտնվող 9.0 քմ մակերեսով հողամասին տրամադրել Ազատամարտիկների փողոց, N 1/1 փոստային հասցե:
2. Ազատամարտիկների փողոց, N 1/1 փոստային հասցեում գտնվող հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ

2017թ. մայիսի 24
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2017 թվականի N 175-Ա

### ՏԱՐՈՆ ԿԱՄՈՅԻ ԱԲԳԱՐՅԱՆԻՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ

**1. Վարչական մարմնի որոշման կարգավորման առարկան.**

Քաղաքացի Տարոն Աբգարյանը (հասցեն՝ ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 193/5) հանդիսանալով հարկվող օբյեկտի (RANGE ROVER մակնիշի, պետհամարանիշ 27 AUO 045) ավտոմեքենայի սեփականատեր, չի կատարել «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված իր պարտականությունները, այն է՝ սահմանված ժամկետում չի վճարել գույքահարկի վճարները: Արդյունքում, 03.05.2017թ. դրությամբ գույքահարկի գծով պարտքը կազմում է 821497 ՀՀ դրամ, ապառք՝ 652500 ՀՀ դրամ, տույժ՝ 168997 ՀՀ դրամ:

Այդ կապակցությամբ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի «բ» ենթակետի համաձայն, Ալավերդու համայնքապետարանում հարուցվել է վարչական վարույթ: 12.05.2017թ. Տ. Աբգարյանին փոստային առաքմամբ ծանուցագիր է ուղարկվել կայանալիք վարչական վարույթին մասնակցելու համար, սակայն հետ է վերադարձել «Տեղափոխված» նշագրումով:

**2. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել այլ վճարումներ: «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ կետի և 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, որպես պետության պատվիրակած լիազորություն, համայնքի ղեկավարն օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի ու հողի հարկի հավաքումը (գանձումը) և վերահսկումը, ինչպես նաև կազմակերպում է տեղական տուրքի և վճարների, համայքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարի գանձումն ու վերահսկումը:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի, կազմակերպությունները գույքահարկի հաշվարկված գումարները համապատասխան բյուջե են վճարում յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը ներառյալ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը համապատասխան բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ: Ելնելով վերոգրյալից ***որոշում եմ***՝

1. Տարոն Աբգարյանից (հասցեն՝ ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 193/5) գանձել 821497 ՀՀ դրամ:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված գումարը ենթակա է վճարման Ալավերդու համայնքապետարանի բյուջեի 900265121047 հաշվեհամարին:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ստացման պահից հետո՝ 2 ամսվա ընթացքում:
4. Սույն որոշման 2-րդ կամ 3-րդ կետի պահանջները չկատարելու դեպքում այն կդառնա անբողոքարկելի վարչական ակտ և գումարը կբռնագանձվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ

2017թ. մայիսի 23
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2017 թվականի N 174-Ա

### ԱՐԹՈՒՐ ԿԱՄՈՅԻ ԱԲԳԱՐՅԱՆԻՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ

1. **Վարչական մարմնի որոշման կարգավորման առարկան.**

Քաղաքացի Արթուր Աբգարյանը (հասցեն՝ ք. Ալավերդի, Էվոյան 1/4) հանդիսանալով հարկվող օբյեկտի /RANGE ROVER մակնիշի, պետհամարանիշ 88 AT 885/ ավտոմեքենայի սեփականատեր, չի կատարել «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված իր պարտականությունները, այն է՝ սահմանված ժամկետում չի վճարել գույքահարկի վճարները: Արդյունքում, 03.05.2017թ. դրությամբ գույքահարկի գծով պարտքը կազմում է 786631 ՀՀ դրամ, ապառք՝ 619500 ՀՀ դրամ, տույժ՝ 167131 ՀՀ դրամ:

Այդ կապակցությամբ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի «բ» ենթակետի համաձայն, Ալավերդու համայնքապետարանում հարուցվել է վարչական վարույթ: 12.05.2017թ. Ա. Աբգարյանին փոստային առաքմամբ ծանուցագիր է ուղարկվել կայանալիք վարչական վարույթին մասնակցելու համար, սակայն հետ է վերադարձել «Տեղափոխված» նշագրումով:

2. **Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել այլ վճարումներ: «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ կետի և 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, որպես պետության պատվիրակած լիազորություն, համայնքի ղեկավարն օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի ու հողի հարկի հավաքումը (գանձումը) և վերահսկումը, ինչպես նաև կազմակերպում է տեղական տուրքի և վճարների, համայքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարի գանձումն ու վերահսկումը:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի, կազմակերպությունները գույքահարկի հաշվարկված գումարները համապատասխան բյուջե են վճարում յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը ներառյալ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը համապատասխան բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ: Ելնելով վերոգրյալից ***որոշում եմ՝***

1. Արթուր Աբգարյանից (հասցեն՝ ք. Ալավերդի, Էվոյան 1/4) գանձել 786631 ՀՀ դրամ:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված գումարը ենթակա է վճարման Ալավերդու համայնքապետարանի բյուջեի 900265121047 հաշվեհամարին:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ստացման պահից հետո՝ 2 ամսվա ընթացքում:
4. Սույն որոշման 2-րդ կամ 3-րդ կետի պահանջները չկատարելու դեպքում այն կդառնա անբողոքարկելի վարչական ակտ և գումարը կբռնագանձվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ

2017թ. մայիսի 23
ք. Ալավերդի